ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքը մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտներին

23.05.2020

Սիրելի շրջանավարտներ,
Լավագույն ցանկություններով շնորհավորում եմ բոլորիդ դպրոցական ուսումնառության ավարտի կապակցությամբ:
Ոչ սովորական և արարողակարգային դարձած պայմաններում դուք հրաժեշտ եք տալիս ձեզ հարազատ դարձած դպրոցին՝ թևակոխելով կյանքի նոր շրջափուլ:
Անկախ ստեղծված իրավիճակից՝ ես ցանկանում եմ, որ դուք կարևորեք և ըստ արժանավույն օգտագործեք այն գիտելիքը, որը ստացել եք դպրոցում: Հավատացած եղեք, որ ձեր մտավոր ներուժն է դառնալու այն հաղթաթուղթը, որով բացելու եք դեպի հաջողություններ տանող դռներն ու իրականություն դարձնելու ձեր երազանքները:
Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ այսօր հենց ձեր շարքերում են վաղվա պետական, քաղաքական, մշակութային և, առհասարակ, հանրային կյանքի տարբեր ոլորտները ներկայացնող ակնառու գործիչները: Եվ իմ մեծագույն ցանկությունն է, որ ինչ մասնագետ էլ դառնաք, ինչ ճանապարհ էլ ընտրեք, առաջին հերթին կայանաք որպես մեր երկրի պատվախնդիր քաղաքացի և, պարզապես, լավ մարդ:
Սիրելի շրջանավարտներ,
Հավատացած եղեք, որ ձեր արժանապատիվ պահվածքն ու աշխատանքը լինելու են ձեր երախտագիտությունն ու երբևիցե չակնկալվող շնորհակալությունը ձեր ուսուցիչներին և ծնողներին: Ուստի ձեր կյանքում պահպանեք և նոր որակ հաղորդեք այն բոլոր արժեքներին, որոնք հարստացած տեսնելու հավատով նրանք փոխանցել են ձեզ:
Կրկին շնորհավորելով բոլորիդ դպրոցն ավարտելու կապակցությամբ՝ ցանկանում եմ, որ հնարավորինս սահուն հարթեք ձեր կյանքի հետագա ճանապարհը, իսկ հաջողության թևավորող ուժը միշտ ուղեկցի ձեզ:
Բարի երթ դեպի նոր կյանք: